

«Սպիտակի Հելսինկյան խումբ»

իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

ԶԵԿՈՒՅՑ

**«Սպիտակ համայնքում բնակչության իրազեկվածության
մակարդակի բարձրացում տեղական
ինքնակառավարման մարմնի գործունեության
վերաբերյալ» ծրագրի արդյունքների**

Զեկույցը տպագրվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի «Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում ICCO և EED կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ «Սպիտակ համայնքում բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացումը ՏԻՄ գործունեության վերաբերյալ» ծրագրի շրջանակներում:

Սպիտակ 2010թ.

Բովանդակություն

Ներածություն.....4

Գլուխ 1

Սպիտակ համայնքում անցկացված հարցումների արդյունքների
ամփոփումը.....6

Գլուխ 2

Իրազեկման նպատակով կատարված գործողությունները.....15

Գլուխ 3

Հավելվածներ.....19

Աշխատակազմի կողմից

Ծրագիրն իրականացնելու համար «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներին՝ համագործակցության, Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գյումրու մասնաճյուղին և «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությանը աջակցության համար:

Ներածություն

Հայաստանում ՏԻՄ համակարգը դեռևս կայացման գործընթացի մեջ է և հասարակության կողմից դեռևս ամբողջությամբ չի ընկալվում նրանց գործունեության նշանակությունը: Մի կողմից ՏԻՄ-ը իր լիազորությունները կատարում է ոչ լիարժեք, մյուս կողմից էլ քաղաքացիները լիարժեք չեն պատկերացնում, թե իրենց խնդիրների լուծումը ինչքանով է առնչվում ՏԻՄ-ի գործունեության հետ: Այս տեսանկյունից առավել քան կարևոր է համայնքի բնակչության իրազեկման մակարդակի բարձրացումը ՏԻՄ գործունեությանը և որոշումների ընդունմանը իրենց հնարավոր մասնակցության վերաբերյալ:

Լոռու մարզի 5 քաղաքներում՝ այդ թվում նաև Սպիտակ համայնքում, 2009թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված ՏԻՄ մոնիթորինգը ցույց տվեց, որ համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասի» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չեն տեղեկացնում բնակչությանը կայացվող նիստերի և որոշումների մասին, մյուս կողմից քաղաքացիները ՏԻՄ գործունեության մասին իրազեկվածության ցածր մակարդակի պատճառով պասիվ են և հակված չեն սեփական նախաձեռնությամբ տեղեկատվություն ստանալուն: ՏԻՄ գործունեության մասին տեղեկատվության բացակայությունը, որոշումների տրամադրման և ստացման օրենքով սահմանված ընթացակարգերի չգործելը հանգեցնում է ՏԻՄ-ի ոչ թափանցիկ գործունեությանը և միաժամանակ ձևավորում է կոռուպցիոն ռիսկեր: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում բարձրացնել ՏԻՄ մասին քաղաքացիների իրազեկվածության մակարդակը Սպիտակ համայնքում՝ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության բարձրացման նպատակով:

2010թ. հունիս-օգոստոս ամիսներին մեր կազմակերպությունը իրականացրեց «Սպիտակ համայնքում բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում ՏԻՄ գործունեության վերաբերյալ» ծրագիրը, որի նպատակն էր նպաստել բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը ՏԻՄ գործունեության վերաբերյալ:

Ծրագրի խնդիրներն էին՝

1. ծանոթացնել Սպիտակ համայնքի բնակիչներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին
2. բացահայտել ՏԻՄ գործունեության վերաբերյալ քաղաքացիների վերաբերմունքը և պասիվության պատճառները
3. ձևավորել երկխոսություն բնակչության և ՏԻՄ-ի միջև
4. Տրամադրել ՏԻՄ-ի գործունեության հետ կապված անվճար իրավախորհրդատվություն:

Ծրագրի նպատակին հասնելու համար կազմակերպությունն իրականացրել է հետևյալ գործողությունները .

1. Սպիտակ համայնքում 100 չափահաս քաղաքացիների հետ անց է կացվել հարցումներ՝ ՏԻՄ-ի գործունեության վերաբերյալ հասարակության վերաբերմունքը պարզելու և դրա պատճառները բացահայտելու նպատակով
2. ծրագրի ամբողջ ընթացքում տրամադրվել է անվճար իրավաբանական խորհրդատվության:
3. անց է կացվել երկու սեմինար-քննարկում՝ բնակչությանը ՏԻՄ օրենսդրությանը ծանոթացնելու, ՏԻՄ ներկայացուցիչների և քաղաքացիների միջև երկխոսություն ձևավորելու նպատակով:
4. տպագրվել և տարածվել է 300 օրինակ տեղեկատվական թերթիկ՝ համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին:
5. կազմակերպվել է տեղական ռադիոյով մեկ եթեր՝ 30 րոպե տևողությամբ «Տեղական ինքնակառավարում» թեմայով:
6. անց է կացվել մեկ ամփոփիչ սեմինար-քննարկում:

Գլուխ 1

Սպիտակ համայնքում անցկացված հարցումների արդյունքների ամփոփում

Հարցումն անց է կացվել 2010թ. հունիսին, որի նպատակն էր բացահայտել հասարակության վերաբերմունքը Սպիտակ համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության նկատմամբ, ՏԻՄ օրենսդրության վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությանը մասնակցելու պասիվության պատճառները: Հարցումներն իրականացվել են նախապես մշակված հարցաթերթիկի միջոցով /տե'ս կից հավելված 1/:

2. Հարցման մասնակիցների ընդհանուր բնութագիրը

Հարցումն անց է կացվել Սպիտակ համայնքի 100 չափահաս քաղաքացիների շրջանում, որոնցից 52-ը եղել են 18-45 տարեկան, 37-ը՝ 46-60, 11-ը՝ 61 տարեկան և բարձր:

Հարցվածներից 28-ը եղել են արական, 72-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ:

Ստորև ներկայացվում է հարցման մասնակիցների կազմը՝ ըստ զբաղմունքի տեսակի:

Աղյուսակ 2.1

Զբաղմունքի տեսակը	Հարցման մասնակիցների թիվը՝ ըստ տոկոսների
Ուսանող	20
Պետական համակարգի աշխատող	32
Մասնավոր համակարգի աշխատող	13
Գործազուրկ	29
Թոշակառու	6
Այլ	0
Ընդամենը	100

3. ՏԻՄ օրենսդրության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի վերլուծություն

ՏԻՄ գործունեության մասին օրենսդրության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բացահայտման նպատակով հարցվողներին մի շարք հարցեր են տրվել՝ կապված համայնքի ղեկավարի եւ ավագանու լիազորությունների եւ պարտականությունների, ավագանու նիստերի կայացման հաճախականության, ինչպես նաեւ հասարակության՝ այդ նիստերին մասնակցելու հնարավորության հետ:

Ստորեւ ներկայացվող աղյուսակից երևում է, թե որքանով են հարցվողները տեղյակ Սպիտակ համայնքի ղեկավարի (քաղաքապետի) լիազորություններին.

Աղյուսակ 3.1

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների		
	Տեղյակ է	Տեղյակ չէ	Ընդամենը
Միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար	62	38	100
Բնակիչների դիմումների, բողոքների և առաջարկությունների հիման վրա միջոցներ է ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ	62	38	100
Կազմում է համայնքի զարգացման ծրագիրը և ներկայացնում ավագանու հաստատմանը	46	54	100
Կազմում է համայնքի բյուջեն և ներկայացնում ավագանու հաստատմանը	39	61	100
Իրականացնում է կառուցապատման աշխատանքներ	41	59	100
Իրականացնում է փողոցների բարեկարգում	39	61	100
Կազմակերպում է աղբահանություն	43	57	100

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների 38 տոկոսը տեղյակ չէ, որ համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններից է համայնքի բնակիչների իրավունքները, օրինական շահերը պաշտպանելը և դիմումների, բողոքների, առաջարկությունների հիման վրա դրանց լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը:

61 տոկոսը չգիտի, որ համայնքի բյուջեն կազմվում և ներկայացվում է ավագանու հաստատմանը: Եւս 61 տոկոսը տեղյակ չէ, որ համայնքի ղեկավարն իրականացնում է փողոցների բարեկարգում, իսկ 57 տոկոսը՝ կազմակերպում է աղբահանություն:

«Ձեր կարծիքով ի՞նչ պարտականություններ ունի համայնքի ավագանին» հարցին տրված պատասխանները ցույց են տալիս, որ հասարակությունը ավելի քիչ է տեղեկացված համայնքի ավագանու, քան համայնքի ղեկավարի պարտականությունների մասին: Հարցման արդյունքները տե՛ս աղյուսակ 3.2-ում:

Աղյուսակ 3.2

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների		
	Տեղյակ է	Տեղյակ չէ	Ընդամենը
Համայնքին վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ քննարկում և ընդունում է որոշումներ	57	43	100
Հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը	49	51	100
Հաստատում է համայնքի բյուջեն	45	55	100
Կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, ընդունում է նրանց դիմումները, բողոքները	36	64	100
Պարբերաբար հանդիպում է համայնքի բնակչության հետ, ներկայացնում է համայնքի ավագանու կատարած աշխատանքները	28	72	100
Վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների նկատմամբ	27	73	100

Հետաքրքիր է, որ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը /73 տոկոսը/ տեղյակ չէ, որ համայնքի ավագանին վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների նկատմամբ:

Իսկ 72 տոկոսը տեղյակ չէ, որ համայնքի ավագանու պարտականություններից է նաև համայնքի բնակչության հետ պարբերաբար հանդիպումներ կազմակերպելը և կատարած աշխատանքները ներկայացնելը:

Հարցման միջոցով փորձել ենք պարզել՝ հարցվողները տեղյակ են արդյոք, թե քանի անդամից է բաղկացած Սպիտակ համայնքի ավագանին, եւ ինչ հաճախականությամբ են կայանում ավագանու նիստերը: Նշենք, որ հարցվողների միայն 37 տոկոսը գիտեր, որ Սպիտակ համայնքի ավագանին բաղկացած է 11 անդամից, իսկ ավագանու նիստերի անցկացման հաճախականության մասին տեղյակ էր հարցվողների ընդամենը 22 տոկոսը:

Քանի որ օրենքի պահանջ է հանդիսանում քաղաքացիների շրջանում ավագանու նիստերի մասին տեղեկություն տարածելը, ուստի փորձել ենք պարզել, թե իրականում որքանով է դա իրականացվում:

«Ինչպե՞ս եք տեղեկանում ավագանու նիստերի կայացման մասին»
 հարցին տրվել են հետևյալ պատասխանները /տե'ս աղյուսակ 3.3/.

Աղյուսակ 3.3

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների
• ռադիոէթերից	2
• հեռուստաէթերից	5
• թերթերից	1
• ավագանու անդամից	3
• քաղաքապետարանից	9
• չեմ տեղեկանում	76
Այլ՝	
• պատահական շփումներից	1
• մարդկանցից	2

• հետաքրքիր չէ	1
Ընդամենը	100

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների գերակշիռ մասը ընդհանրապես չի տեղեկանում ավագանու նիստերի մասին, և միայն 9 տոկոսն է տեղեկանում քաղաքապետարանից:

Նշենք, որ հարցվողների 33 տոկոսը կարծում է, որ ավագանու անդամները վարձատրվում են իրենց կատարած աշխատանքի համար: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 5 տոկոսը:

4. ՏԻՄ գործունեությանը մասնակցելու քաղաքացիների պասիվության պատճառների վերլուծություն

Հարցաթերթիկում ներառված էին մի շարք հարցեր կապված՝ ՏԻՄ ընտրություններին քաղաքացիների մասնակցության, ընտրություններից հետո համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին դիմելու, ավագանու նիստերին և որոշումների կայացմանը մասնակցելու հետ, որոնց միջոցով փորձել ենք բացահայտել քաղաքացիների՝ ՏԻՄ գործունեությանը մասնակցելու պասիվության պատճառները:

«Վերջին 6 տարվա ընթացքում մասնակցել ե՞ք Մպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի, ավագանու) ընտրություններին» հարցին դրական են պատասխանել հարցվողների 76 տոկոսը:

Հարցվողների միայն 19 տոկոսն է վերջին 2 տարվա ընթացքում դիմել համայնքի ղեկավարին: Աղյուսակ 4.1-ում ներկայացվում են, թե նրանք ինչ հարցով են դիմել համայնքի ղեկավարին /հարցվողներից մեկը ընտրել է 2 տարբերակ/:

Աղյուսակ 4.1

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների
<ul style="list-style-type: none"> սոցիալական աջակցություն տրամադրելու խնդրանքով 	2
<ul style="list-style-type: none"> հողահատկացման թույլտվություն տրամադրելու խնդրանքով 	2
<ul style="list-style-type: none"> բնակարանի հատկացման խնդրանքով 	11
<ul style="list-style-type: none"> շենքի տանիքի վերանորոգման հարցով 	1
<ul style="list-style-type: none"> ինքնաշեն կառույցի օրինականացման հարցով 	2
<ul style="list-style-type: none"> կառուցապատման իրավունք ձեռք բերելու հարցով 	1
Այլ՝ <ul style="list-style-type: none"> երիտասարդների համար ժամանցի վայրեր ավելացնելու հարցով 	1
Ընդամենը	20

Այն, որ հարցվողների 81 տոկոսը համայնքի ղեկավարին որևէ հարցով չի դիմել, բացատրում են մի շարք պատճառներով: Մասնավորապես՝ 63 տոկոսը նշել է, որ կարիք չի եղել, 5 տոկոսը տեղյակ չի եղել, որ դիմելու իրավունք ունի, 2 քաղաքացի նշել է այլ տարբերակ /տե՛ս աղյուսակ 4.1/: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 11 տոկոսը:

Վերջին 2 տարվա ընթացքում ավագանու անդամին/ներին դիմել է հարցվողների միայն 6 տոկոսը, որից 4 տոկոսը բնակարանի հատկացման խնդրանքով, 1 տոկոսը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու, ևս 1 տոկոսը՝ հողահատկացման թույլտվություն ստանալու հարցով:

Նշված անձինք ավագանու անդամին գտել են քաղաքապետարանի /2 տոկոս/, ծանոթների /2 տոկոս/, բարեկամի /1 տոկոս/ կամ հարևանի /1 տոկոս/ միջոցով:

Ավագանու անդամի հետ հանդիպումները կայացել են քաղաքապետարանում /2 տոկոս/ կամ ավագանու անդամի աշխատավայրում /4 տոկոս/:

«Ինչպե՞ս եք տեղեկացել Ձեր դիմումի ընթացքի մասին» հարցին հարցվողների 5 տոկոսը ընտրել է «ավագանու անդամից», 1 տոկոսը՝ «քաղաքապետարանից» տարբերակները:

Բոլոր քաղաքացիները ավագանու անդամին դիմել են բանավոր, դրական լուծում ստացել է վեց դիմողներից միայն մեկ քաղաքացու խնդիր: Հարցվածների 94 տոկոսն ընդհանրապես չի դիմել համայնքի ավագանուն:

Ստորև ներկայացվում է համայնքի ավագանուն չդիմելու պատճառները /հարցվողներից մեկը ընտրել է 2 տարբերակ/.

Աղյուսակ 4.2

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների
<ul style="list-style-type: none"> կարիք չի եղել 	52
<ul style="list-style-type: none"> տեղյակ չեմ եղել, որ դիմելու իրավունք ունեմ 	8
<ul style="list-style-type: none"> անիմաստ եմ համարում 	28
<ul style="list-style-type: none"> դժվարանում եմ պատասխանել 	6
Այլ՝ <ul style="list-style-type: none"> ծառայության մեջ եմ եղել 	1
Ընդամենը	95

«Երբե՞ս մասնակցե՞լ եք ավագանու նիստերին» հարցին բոլոր 100 հարցվողները տվել են բացասական պատասխան:

5. Քաղաքացիների վերաբերմունքը ՏԻՄ գործունեությանը և նրանց առաջարկությունները

Հարցման միջոցով փորձել ենք պարզել հարցվողների վերաբերմունքը Սպիտակ համայնքի ղեկավարի եւ ավագանու գործունեության նկատմամբ, որը ներկայացվում է աղյուսակ 5.1-ում:

«Ինչպե՞ս եք գնահատում համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության արդյունավետությունը»

Աղյուսակ 5.1

Տարբերակի անվանումը	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների	
	Համայնքի ղեկավար	Ավագանի
Արդյունավետ	12	4
Բավարար	42	32
Ոչ բավարար	21	38
Դժվարանում եմ պատասխանել	25	26
Այլ	0	0
Ընդամենը	100	100

Հարցաթերթիկի վերջում հարց էր ուղղված քաղաքացիներին այն մասին, թե ինչ կառաջարկեն փոփոխել՝ Սպիտակ համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Նշենք, որ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը /74 տոկոսը/ առաջարկել է ակտիվացնել հասարակության մասնակցությունը ՏԻՄ գործունեությանը: 22 տոկոսը ցանկանում է օրենսդրական փոփոխություններ կատարել, 12 տոկոսը առաջարկել է վարձատրել ավագանու անդամին:

Նշվել են նաև այլ տարբերակներ, որոնք ներկայացվում են աղյուսակ 5.2-ում:

Աղյուսակ 5.2

Տարբերակներ	Պատասխանների թիվը՝ ըստ տոկոսների
<ul style="list-style-type: none"> ակտիվացնել հասարակության մասնակցությունը ՏԻՄ գործունեությանը 	74
<ul style="list-style-type: none"> կատարել օրենսդրական փոփոխություններ 	22
<ul style="list-style-type: none"> վարձատրել ավագանու անդամներին 	12
Այլ՝	
<ul style="list-style-type: none"> ավելի շատ ուշադրություն դարձնել համայնքում կատարվող աշխատանքներին 	1
<ul style="list-style-type: none"> հաշվի առնել քաղաքացիների այն առաջարկները, որոնք իսկապես ժողովրդի օգտին են 	1
<ul style="list-style-type: none"> հաշվետվություն տալ իրականացված աշխատանքների մասին 	1
<ul style="list-style-type: none"> հետևողականորեն վերահսկողություն սահմանել ավագանու անդամների և նրանց գործունեության նկատմամբ 	1
<ul style="list-style-type: none"> հաճախակի շփվել բնակիչների հետ 	1
<ul style="list-style-type: none"> ընտրվի արժանավոր մարդ 	1
Ընդամենը	100

6. Եզրակացություն

Հարցման արդյունքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. հարցման արդյունքները ցույց են տալիս, որ համայնքի բնակչության մեծ մասը ծանոթ չէ ՏԻՄ գործունեության մասին օրենսդրությանը:
2. Բնակչությունը ավելի քիչ տեղեկացված է ավագանու ինստիտուտի, քան համայնքի ղեկավարի գործունեության մասին:
3. Քաղաքացիները ընտրությունների ժամանակ բավականին ակտիվ են, ինչը չի կարելի ասել ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածի մասին, որը պակաս կարևոր չէ:
4. Բնակչության մեծ մասը չի վստահում ՏԻՄ-ին և դիմում է միայն անձնական խնդիրներով:
5. Բնակչությունը ավելի քիչ տեղեկացված է ավագանու գործունեությանը, քան համայնքի ղեկավարի և դրանով է պայմանավորված, որ զգալի մասը համայնքի ղեկավարի գործունեության արդյունավետությունը գնահատել է բավարար, ավագանունը՝ ոչ:
6. Հարցվողների գերակշիռ մասը կարևորում է հասարակության մասնակցությունը ՏԻՄ գործունեությանը:

ԳԼՈՒԽ 2

Իրազեկման նպատակով կատարված գործողությունները

1. Իրավական խորհրդատվության արդյունքների նկարագրություն

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում կազմակերպության կողմից քաղաքացիներին տրամադրվել է ՏԻՄ ոլորտին առնչվող անվճար իրավական խորհրդատվություն, որի նպատակն էր իրազեկել քաղաքացիներին ՏԻՄ գործունեության մասին օրենսդրությանը և դրանով իսկ աջակցել նրանց իրավունքների պաշտպանությանը:

Իրավական խորհրդատվություն ստանալու նպատակով կազմակերպություն է դիմել թվով 27 քաղաքացի, նրանցից 10-ը՝ ստացել է բանավոր իրավական խորհրդատվություն հեռախոսազանգի միջոցով, 17-ը՝ գրասենյակ այցելելով, 9 քաղաքացու համար կազմվել են դիմումներ, տեղեկատվության հարցումներ՝ ուղղված տեղական և պետական իշխանության մարմինների: Նրանց խնդիրների լուծումը դեռևս գործընթացի մեջ է:

Խնդիրները հիմնականում վերաբերում էին.

- հողահատկացմանը
- բնակարանների սեփականաշնորհմանը
- ինքնակամ կառույցների սեփականաշնորհման կարգին ծանոթանալուն
- աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում բնակարան ստանալուն
- ՏԻՄ-ից տեղեկատվություն ստանալուն:

2. Սեմինար- քննարկումներ

Սպիտակ համայնքի բնակչությանը ՏԻՄ գործունեության մասին օրենսդրությանը իրազեկելու, ՏԻՄ ներկայացուցիչների և քաղաքացիների միջև երկխոսություն ձևավորելու նպատակով ծրագրի հունիս, հուլիս ամիսներին անց է կացվել մեկական սեմինար-քննարկում: Սեմինար-քննարկմանը մասնակցել են քաղաքացիներ, ավագանու անդամներ, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների,

զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Մեմինար-քննարկումներին որպես փորձագետ հրավիրված էր իրավապաշտպան, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը:

Մեմինար-քննարկումների ընթացքում մասնակիցներին ներկայացվել է ՏԻՄ օրենսդրությունը՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների իրավունքները, պարտականությունները, ավագանու նիստերի անցկացման հաճախականությունը և կարգը, քաղաքացիների իրավունքները և կրած վնասների վերականգնման ընթացակարգը:

Այնուհետև, հարց ու պատասխանի միջոցով երկխոսություն է ծավալվել քաղաքացիների և ավագանու անդամների միջև: Քաղաքացիները հնարավորություն են ունեցել ստանալ իրենց հուզող և հետաքրքրող հարցերի պատասխանները ավագանու անդամներից:

Երկրորդ սեմինար-քննարկման ընթացքում մասնակիցներին ներկայացվել է նաև կազմակերպության կողմից անցկացված հարցման արդյունքները: Մեմինար-քննարկումների ժամանակ քաղաքացիները և ավագանու անդամները, անդրադառնալով ՏԻՄ գործունեության մասին

բնակչության անբավարար իրազեկվածության խնդրին, որպես հիմնական պատճառ նշեցին տեղեկատվության աղբյուրների պակասը (առկա չեն օրենքով սահմանված 2000 բնակչի համար տեղեկատվական ցուցատախտակները, ՏԻՄ-ի գործունեությունը ռադիո և հեռուստատեղեկատվությամբ պարբերաբար չի լուսաբանվում, Սպիտակ համայնքը չունի վեբ-կայք): Ի դեպ նշենք, որ համայնքի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչի հավաստմամբ՝ վեբ-կայքը պատրաստման գործընթացի մեջ է:





Լուսանկարներ սեմինար-քննարկումից

3. Իրազեկման այլ գործողություններ

Բնակչության լայն շրջանակներում ՏԻՄ գործունեության մասին օրենսդրությանը և գործունեությանը իրազեկելու նպատակով ծրագրի շրջանակներում

- տպագրվել և տարածվել է թվով 300 տեղեկատվական թերթիկ՝ համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին: (տես հավելված 2)
- անց է կացվել մեկ ռադիոթեր Տեղական ի նքնակառավարումի թեմայով: Ռադիոթերի ընթացքում ներկայացվել է ՏԻՄ գործունեության մասին օրենսդրությունը, կազմակերպության կողմից անցկացված հարցումների վերլուծությունը:
- իրականացվել է ամփոփիչ սեմինար-քննարկում Սպիտակ համայնքի բնակչության, ՏԻՄ, ՔՀԿ ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ժամանակ ներկայացվել են ծրագրի ողջ ընթացքում կատարված աշխատանքները, ամփոփվել են արդյունքները: Սեմինար-քննարկման ավարտին եղել են համագործակցության առաջարկություններ քաղաքացիների, ՏԻՄ և ՔՀԿ ներկայացուցիչների կողմից:



Լուսանկար ամփոփիչ սեմինար-քննարկումից

Գլուխ 3

Հավելվածներ

Հավելված 1

Հարցաթերթի օրինակ

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Սույն հարցման նպատակն է՝ բացահայտել հասարակության վերաբերմունքը Սպիտակ համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության նկատմամբ, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու գործունեությանը մասնակցելու պասիվության պատճառները:

Հարցումն իրականացվում է «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սպիտակ համայնքում բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում ՏԻՄ գործունեության վերաբերյալ» ծրագրի շրջանակներում:

1. **Բնակության վայրը** _____

2. **Տարիքը** 18-45 45-60 61 և բարձր

3. **Սեռը** իգական արական

4. **Զբաղմունքի տեսակը / խնդրում ենք կատարել 1 նշում/**

- ուսանող
- պետական համակարգի աշխատող
- մասնավոր համակարգի աշխատող
- գործազուրկ
- թոշակառու
- այլ _____

5. **Վերջին 6 տարվա ընթացքում մասնակցե՞լ եք Սպիտակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի, ավագանու) ընտրություններին** այո ոչ

6. **Ձեր կարծիքով ի՞նչ պարտականություններ ունի Սպիտակ համայնքի ղեկավարը (քաղաքապետը)**

- միջոցներ է ձեռնարկում համայնքի բնակիչների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար
- բնակիչների դիմումների, բողոքների և առաջարկությունների հիման վրա միջոցներ է ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ
- կազմում է համայնքի զարգացման ծրագիրը և ներկայացնում ավագանու հաստատմանը
- կազմում է համայնքի բյուջեն և ներկայացնում ավագանու հաստատմանը
- իրականացնում է կառուցապատման աշխատանքներ
- իրականացնում է փողոցների բարեկարգում
- կազմակերպում է աղբահանություն

7. Վերջին 2 տարվա ընթացքում երբեւէ դիմե՞լ եք Սպիտակ համայնքի ղեկավարին այո ոչ

ա) Եթե այո, ապա ի՞նչ հարցով

- սոցիալական աջակցություն տրամադրելու խնդրանքով
- հողահատկացման թույլտվություն տրամադրելու խնդրանքով
- բնակարանի հատկացման խնդրանքով
- շենքի տանիքի վերանորոգման հարցով
- ինքնաշեն կառույցի օրինականացման հարցով
- կառուցապատման իրավունք ձեռք բերելու հարցով
- այլ (խնդրում ենք նշել) _____

բ) Եթե ոչ՝ ինչո՞ւ

- կարիք չի եղել
- տեղյակ չեմ եղել, որ դիմելու իրավունք ունեմ
- դժվարանում եմ պատասխանել
- այլ (խնդրում ենք նշել) _____

8. Ձեր խնդիրը ստացե՞լ է արդյոք դրական լուծում այո ոչ

9. Ինչպե՞ս եք գնահատում Սպիտակ համայնքի ղեկավարի գործունեության արդյունավետությունը

- արդյունավետ
- բավարար
- ոչ բավարար
- դժվարանում եմ պատասխանել
- այլ (խնդրում ենք նշել) _____

10. Քանի՞ անդամից է բաղկացած Սպիտակ համայնքի ավագանին _____

11. Ձեր կարծիքով ի՞նչ պարտականություններ ունի համայնքի ավագանին՝

- համայնքին վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ քննարկում և ընդունում է որոշումներ
- հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը
- հաստատում է համայնքի բյուջեն
- կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, ընդունում է նրանց դիմումները, բողոքները
- պարբերաբար հանդիպում է համայնքի բնակչության հետ, ներկայացնում է համայնքի ավագանու կատարած աշխատանքները
- վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների նկատմամբ

12. Վերջին 2 տարվա ընթացքում երբեւէ դիմե՞լ եք ավագանու անդամին/ներին այո ոչ

ա) Եթե այո, ապա ի՞նչ հարցով

- սոցիալական աջակցություն տրամադրելու խնդրանքով
- հողահատկացման թույլտվություն տրամադրելու խնդրանքով
- բնակարանի հատկացման խնդրանքով
- շենքի տանիքի վերանորոգման հարցով
- ինքնաշեն կառույցի օրինականացման հարցով
- այլ (խնդրում ենք նշել) _____

բ) Եթե ոչ՝ ինչո՞ւ

- կարիք չի եղել
- տեղյակ չեմ եղել, որ դիմելու իրավունք ունեմ
- անիմաստ եմ համարում
- դժվարանում եմ պատասխանել
- այլ (խնդրում ենք նշել) _____

13. Ինչպե՞ս եք գտել ավագանու անդամին

- բարեկամի միջոցով
- հարևանի միջոցով
- ծանոթի միջոցով
- քաղաքապետարանի միջոցով
- այլ (խնդրում ենք նշել) _____

14. Որտե՞ղ եք հանդիպել ավագանու անդամին

- քաղաքապետարանում
- ավագանու անդամի աշխատավայրում
- փողոցում
- ավագանու անդամի տանը
- այլ (խնդրում ենք նշել) _____

15. Ավագանու անդամին դիմել եք գրավո՞ր, թե՞ բանավոր ձևով բանավոր գրավոր

16. Եթե այո՝ ինչպե՞ս եք տեղեկացել Ձեր դիմումի ընթացքի մասին

- ավագանու անդամից
- քաղաքապետարանից
- որոշումների փակցման համապատասխան վայրից
- այլ (խնդրում ենք նշել) _____

17. Ձեր խնդիրը ստացե՞լ է արդյոք դրական լուծում այո ոչ

18. Ձեր կարծիքով ի՞նչ հաճախականությամբ են կայանում ավագանու նիստերը

- ոչ պակաս, քան տարին 1 անգամ
- ոչ պակաս, քան 6 ամիսը 1 անգամ
- ոչ պակաս, քան 2 ամիսը 1 անգամ
- ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիս
- դժվարանում եմ պատասխանել

19. Ինչպե՞ս եք տեղեկանում ավագանու նիստերի կայացման մասին

- ռադիոտեղեկություններ
- հեռուստատեղեկություններ
- թերթերից
- ավագանու անդամից
- քաղաքապետարանից
- իրազեկման տախտակից
- չեմ տեղեկանում
- այլ _____

20. Ձեր կարծիքով ցանկացած անձ կարո՞ղ է մասնակցել ավագանու նիստերին այո ոչ

21. Երբևէ մասնակցե՞լ եք ավագանու նիստերին այո ոչ

22. Եթե այո, ապա նիստի ժամանակ ունեցե՞լ եք արդյոք արտահայտվելու հնարավորություն

այո ոչ

23. Ձեր կարծիքով ավագանու անդամները վարձատրվու՞մ են իրենց կատարած աշխատանքի համար

այո ոչ

24. Ինչպե՞ս եք գնահատում Սպիտակ համայնքի ավագանու գործունեությունը

- արդյունավետ
- բավարար
- ոչ բավարար
- դժվարանում եմ պատասխանել
- այլ (խնդրում եմք նշել) _____

25. Ի՞նչ կառաջարկեք փոփոխել՝ Սպիտակ համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

- ակտիվացնել հասարակության մասնակցությունը ՏԻՄ գործունեությանը
- օրենսդրական փոփոխություններ կատարել
- վարձատրել ավագանու անդամներին
- այլ (խնդրում եմք նշել) _____

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ